ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 03 >> ---- օգոստոսի ---- 2015թ. N 62

ք. Արմավիր

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 163-րդ, 164-րդ և 169-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման N 1 հավելվածի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի 2015 թվականի օգոստոսի 3-ի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանին տրամադրել 2015 թվականի իր ամենամյա նվազագույն արձակուրդի մասը և լրացուցիչ արձակուրդը՝ 2015 թվականի օգոստոսի 12-ից օգոստոսի 31-ը ներառյալ՝ 14 աշխատանքային (10 նվազագույն, 4 լրացուցիչ) օր տևողությամբ:
2. Վարազդատ Մկրտչյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Հովհաննես Հարությունյանին:
3. Վարազդատ Մկրտչյանի 2015 թվականի ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը /10 աշխատանքային օր/ տրամադրել 2015 թվականի ընթացքում:
4. Վարազդատ Մկրտչյանին աշխատանքի մեջ համարել 2015 թվականի սեպտեմբերի 1-ից:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ